բուն եւ առանց հայու տոլվաթաւորացն խոսիցն բան չանեն։ Եւ այս ուխտ ու դաշինքն որ արարին, ի Հայու եւ ի Ֆռանկի ազգի մէջն, եւ այնպէս երդում դրած են բ· ազգի մէջն, եւ ձեռագիր տուած են մէկ մէկի եւ մոհր՝ այս միաբանութեանս պատճառի համար։ Եւ դարձեալ խնդրեմք ի ձեզանէ, թէ Ֆռանկի ըռէիզն է եւ թէ վէգիլն է, եւ թէ Հայոց եպիսկոպոսն է եւ թէ իւր վէգիլն է, որ հանապազ միաբան սիրով մէկ մէկի հետ լինիք· եւ թէ բան մի անէք, նա մէկ մէկի դաւըշմիչ լինիք ապա անէք· թէ Հայու եպիսկոպոսին բան մի լինի, նա՛ Ֆռանկի ըռէիզն իւրեանց օգնութիւն թող անէ, եւ թէ Ֆռանկի ըռէիզին բան մի լինի, նա թող Հայոց եպիսկոպոսն իւրեանց օգնութիւն անէ։ Մէկ մէկալին օգնութիւն առնեն, որ երթա՛ սէրն եւ միաբանութիւն հաստատի եւ խռովութիւն վերանա՛։ Որպէս ուսուցանէ Քրիստոս ի սուրբ աւետարանն, թէ Սիրեցէք զմիմեանս, որպէս ես զձեզ սիրեցի եւն· բաւ է»։

1624 Դեկտ· 10ին Տարածման Հաւատոյ Ս· Ժողովը Եկեղեցիներու Միութեան համար դիմած էր ինչպէս Երուսաղէմի յոյն պատրիարքին, նոյնպէս Հայոց Գրիգոր Պարոնտէր պատրիարքին[3]։ Բարեկամական յարաբե-

---

[3] Propaganda, Lettere volgari della S. Congregatione, vol. 3, f. 206. հմմտ. եւ G. Hofmann, Griechische Patriarchen und römische Päpste. Roma 1933, S. 8—9. Orientalia Christiana, vol. 30, 1, (1933).